“Աջակցություն Կովկասի լեռնային շրջանների համայնքային անտառների քաղաքականությանը և պրակտիկային” տարածաշրջանային ծրագիր

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2011

Համայնքային Անտառկարավարման “Իրավական խնդիրներ”
գրքույկի հեղինակներ՝

Արմեն Գևորգյան	ԱՀԱՔ ծրագրի ազգային թիմի ղեկավար
Կարինե Գրիգորյան	ԱՀԱՔ ծրագրի իրավական փորձագետ
Ռուբիկ Շահազիզյան	ԱՀԱՔ ծրագրի համայնքային անտառկառավարման պլանավորման կարողությունների հզորացման փորձագետ
Անդրանիկ Ղուլիջանյան	ԱՀԱՔ համայնքային անտառկառավարման պլանավորման փորձագետ
Պավել Աբովյան	ԱՀԱՔ ծրագրի հանրային իրազեկման փորձագետ

Գրքույկի խմբագիր՝ Ազատուհի Սահակյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 2

1. Համայնքային անտառկառավարում, էությունը, իրավական հիմքերը 3

2. Ընդհանուր տեղեկություններ պետական անտառների հավատարմագրային կառավարման մասին 5

3. Համայնքային բնակչության մասնակցության ապահովումը համայնքային անտառկառավարման գործընթացին 7

4. ՀՀ “Անտառային օրենսգիրք”. հանրամատչելի տեղեկատու 9

5. ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի “Պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատելու մասին” N 583-Ն որոշումը 18

6.”Պետական անտառները համայնքային կազմակերպությունն-ներին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը”. հանրամատչելի տեղեկատու 18

7. “Պետական անտառների հավատարմագրային կառավարման հայտի ընդունման և մերժման պայմանները”. հանրամատչելի տեղեկատու 20

8. “Պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագրի պայմանները”. հանրամատչելի տեղեկատու 22

Նախաբան

“Համայնքային անտառկառավարում” տեղեկատվական հանրամատչելի ձեռնարկը նախապատրաստվել է “Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն” հիմնադրամի կողմից իրականացվող ***“Աջակցություն Կովկասի լեռնային շրջանների համայնքային անտառների քաղաքականությանը և պրակտիկային”*** ԱՀԱՔ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում:

Կարևորելով բնական պաշարների կառավարման գործընթացին տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքային կառույցների, հասարակական կազմակերպությունների և ազգաբնակչության մասնակցային գործընթացի ապահովումը՝ ձեռնարկը մատչելի տեղեկատվություն է տրամադրում համայնքային անտառկառավարման էության, նպատակի, իրավական հիմքերի, համայնքային անտառկառավարման մասնակցային գործընթացի և հարակից այլ խնդիրների վերաբերյալ:

Ձեռնարկը նպատակ ունի անտառկառավարման արդյունավետ իրականացման համար համայնքներին տրամադրել կառավարման, օգտագործման և պահպանության վերաբերյալ իրավական տեղեկատվություն՝ որպես ուղեցույց համայնքային անտառկառավարումը գործնականում իրականացնելու համար: Ձեռնարկում տեղ են գտել համայնքային անտառկառավարման ոլորտը կարգավորող նորմեր, հղումներ են արվել ՀՀ “Անտառային օրենսգրքին”, “Պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատելու մասին” ՀՀ կառավարության 04 մայիսի 2006թ. N 583 /լրացում 24. Նոյեմբեր-ի 2011թ. N 1662-Ն / որոշմանը:

1. *Համայնքային անտառկառավարում, էությունը, իրավական հիմքերը*

Համայնքային անտառկառավարումը համարվում է կայուն անտառկառավարման կարևորագույն բաղադրիչներից մեկը և ներառում է բնապահպանական, տնտեսական և սոցիալական տարաբնույթ խնդիրներ: Այն պետական գործառույթների ապակենտրոնացման և բնական պաշարների արդարացի օգտագործման գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացման արդյունավետ միջոցներից է: Սակավանտառ Հայաստանի համար համայնքային անտառ-կառավարման հիմնական նպատակ է համարվում ոչ միայն անտառի ուղղակի օգտագործումը և բնափայտի մթերումը, այլև անտառի կողմնակի օգտագործման համակարգի զարգացումը: Հայաստանի անտառները, հարուստ լինելով տարբեր անտառային համակեցություններով և տեսակային մեծ բազմազանությամբ, համայնքային անտառկառավարման համար հնարավորություն են ստեղծում լայնորեն կիրառել անտառօգտագործման տարբեր եղանակներ: Համայնքային անտառկառավարման օբյեկտ կարող են համարվել ինչպես համայնքի վարչական սահմաններում պետական սեփականություն հանդիսացող, այնպես էլ համայնքային հողերի վրա հիմնադրված և համայնքներին պատկանող անտառները: Համայնքի վարչական սահմաններում գտնվող անտառները, համաձայն ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 4–ի N 583–Ն որոշման, համայնքային կազմակերպություններին են հանձնվում առանց մրցույթի: Համայնքային ենթակայության կազմակերպություններին առանց մրցույթի տրվում են հավատարմագրային կառավարման և անտառային տնտեսության վարման, նախկինում գյուղացիական կոլեկտիվ ու խորհրդային տնտեսություններին պատկանող և համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական անտառները և պետությանը սեփականության իրավունքով պատկանող անտառային հողերը :

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. նոյեմբերի 24-ի N 1662-Ն որոշման՝ պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 4-ի N 583-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարվել են հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

- հավատարմագրային կառավարման կարող են հանձնվել բացառապես տվյալ համայնքի վարչական սահմաններում գտնվող անտառային տարածքները,
- համայնքային ենթակայության կազմակերպությունը պետք է ունենա անտառային ոլորտում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ ունեցող, անտառագիտություն կամ ագրոնոմիական մասնագիտությունների գծով բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթությամբ մասնագետ (մասնագետներ): Համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող անտառների հավատարմագրային կառավարման համար կիրառվում է ընդհանուր՝ մրցութային ընթացակարգ:

Համայնքային անտառկառավարման (հավատարմագրային կառավարման) կազմակերպման համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- Համայնքի կողմից համայնքային անտառկառավարում ստանձնող կազմակերպության ստեղծում:
- Համայնքային ենթակայության կազմակերպության կողմից պետական անտառների՝ առանց մրցույթի հավատարմագրային կառավարումն ստանձնելու նպատակով լիազորված պետական մարմնի կողմից հաստատված ձևի հայտի ներկայացում լիազորված պետական մարմնին:

- Պետական անտառները համայնքային կազմակերպություններին (հավատարմագրային կառավարչին) առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու մասին համապատասխան գրավոր պայմանագրի կնքում:
- Անտառկառավարման պլանի համաձայն՝ անտառկառավարման իրականացում:

2. Ընդհանուր տեղեկություններ պետական անտառների հավատարմագրային կառավարման մասին

Կարևոր է իմանալ, որ

1. Պետական անտառների հավատարմագրային կառավարումն իրականացվում է պետական անտառը կամ անտառային հողերը համայնքային ենթակայության կազմակերպությանն առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով՝ կնքելով անտառների հավատարմագրային կառավարման պայմանագիր:

2. Պետակ ան անտառները կարող են հավատարմագրային կառավարման հանձնվել միայն անտառաշինական նախագծերի առկայության դեպքում:

3. Պետական անտառների հավատարմա գրային կառավարման պայմանագրով լիազորված պետական կառավարման մարմինը նախկինում գյուղացիական կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններին պատկանող անտառները կարող է առանց մրցույթի համայնքային ենթակայության կազմակերպությանը տրամադրել մինչև 10 տարի ժամկետով՝ հաշվի առնելով անտառաշինական նախագծերի գործողության ժամկետը:

4. Հավատարմագրային կառավարման հանձնվող պետական անտառների սահմանները որոշվում են օրենքով սահմանված

կարգով հաստատված անտառաշինական նախագծերին, համայնքային ենթակայության կազմակերպության կողմից ներկայացված հայտում նշված տարածքի չափերին և տեղում կատարված դաշտային աշխատանքների արդյունքներին համապատասխան:

5. Անտառաշինական նախագիծը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելուց և դրա մասին համապատասխան համայնքին գրավոր տեղեկացնելուց հետո եռամսյա ժամկետում համայնքային ենթակայության կազմակերպության կողմից սույն կարգով սահմանված պետական անտառների համայնքային կառավարման հայտ չներկայացնելու դեպքում՝ լիազորված պետական մարմինը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է հայտարարել մրցույթ՝ պետական անտառները հավատարմագրային կառավարման հանձնելու նպատակով:

6. Հավատարմա գրային կառավարիչն (տվյալ դեպքում համայնքային կազմակերպությունը) իրավունք ունի իրականացնելու միայն հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված անտառօգտագործման տեսակները:

7. Հավատարմագրային կառավարման դրույթները չեն տարածվում համայնքների այն իրավունքների վրա, ըստ որոնց համայնքներն իրենց առևտրային կազմակերպությունների միջոցով կնքում են վարձակալության կամ իրենց տարածքային վարչական սահմաններում գտնվող պետական անտառների վերաբերյալ օրենքով սահմանված որևէ այլ տեսակի պայմանագիր:

Կառավարման համար հիմք է կառավարչի և հիմնադրի միջև գրավոր կնքված՝ վերջինիս պատկանող կառավարման օբյեկտների կառավարման հանձնելու մասին պայմանագիրը :

3. Համայնքային բնակչության մասնակցության ապահովումը համայնքային անտառկառավարման գործընթացին

Համայնքային անտառկառավարումը իրականացվում է անմիջապես համայնքամերձ տարածքներում և իր էությամբ շոշափում է համայնքի բնակչության շահերը: Գաղտնիք չէ, որ համայնքամերձ տարածքները բնակչության կողմից օգտագործվում են սոցիալական կարիքների լուծման նպատակով: Անտառային բացուտները բնակչության կողմից օգտագործվում են ինչպես խոտհարքներ ու արոտավայրեր, այնպես էլ որպես տարածքներ՝ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար: Անտառվերականգնման իրականացումը այդ տարածքներում հանգեցնում է համայնքի անդամների մի մասի դժգոհությանը՝ առաջացնելով սոցիալական որոշակի լարվածություն: Մյուս կողմից, համայնքային անտառկառավարման իրականացումը բնապահպանական խնդիրների լուծմանը զուգահեռ նպաստում է համայնքների սոցիալական խնդիրների լուծմանը: Համայնքային բնակչության շահերը հաշվի առնելու նպատակով կարևորվում է նրանց մասնակցելու ապահովումը անտառկառավարման վերաբերյալ ընդունվող որոշումներում, որի իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել աշխատանքների լիակատար թափանցիկություն: Կարելի է օգտագործել զանգվածային լրատվության տեղական միջոցների հնարավորությունները, գրավոր հայտարարությունները, տեղեկատվական թերթիկները, աշխատանքներ նախաձեռնող խմբի անդամների կողմից տեղեկատվության տարածումը և այլն:

Մինչև համապատասխան որոշումներ ընդունելը (տեղանքի և վերականգնվող տարածքներում համապատասխան ծառատեսակների ընտրություն, անտառօգտագործման գերակա ուղղվածություն, անտառային արդյունքներից օգտվելու կարգ և այլն) անհրաժեշտ է այդ մասին ոչ միայն տեղյակ պահել համայնքի անդամներին ու համայնքային շահագրգիռ կազմակերպություններին, այլև խորհրդակցել նրանց հետ ու

հաշվի առնել նրանց կարծիքները: Նպատակահարմար է օգտագործել ինչպես կոլեկտիվ քննարկումների կազմակերպումը, այնպես էլ անհատական հանդիպումները, որտեղ կարելի է մանրամասն տեղեկատվություն տալ ծրագրվող աշխատանքների վերաբերյալ, լսել նրանց կարծիքները և վեր հանել սպասումները : Շատ հաճախ մարդիկ խուսափում են կոլեկտիվ հանդիպումների ժամանակ իրենց մտքերն արտահայտելուց, սակայն հնարավոր է, որ նրանք ունենան արժեքավոր տեղեկություններ և գործնական առաջարկություններ, որոնք կնպաստեն համայնքային անտառկառավարման իրականացման գործընթացին, այդ իսկ տեսակետից կարևորվում է անհատական զրույցների իրականացումը : Համայնքի անդամները պետք է զգան, որ իրենց կարծիքը հաշվի է առնվում, հետևապես նրանց առաջարկները պետք է գրառվեն և համախմբվեն աշխատանքների (միջոցառումների) ծրագիրը կազմելու ժամանակ քննարկելու և համապատասխան որոշում ընդունելու համար: Մասնակցային ապահովման լիարժեք կազմակերպման գործընթացում անչափ կարևորվում է հետադարձ կապի ապահովումը, որը իրենից ենթադրում է անկեղծ երկխոսություն, և միմյանց հանդեպ հարգալից վերաբերմունք:

Աշխատանքների ծրագրավորման վերաբերյալ ընդունված որոշումները պետք է հասու լինեն բնակչությանը, որը կարելի է ապահովել ՏԻՄ–ի անդամների, լրատվության տեղական միջոցների, հրատարակվող տեղեկատվական թերթիկների միջոցով: Պետք է հիշել, որ համայնքային անտառկառավարմանը համայնքային բնակչության ակտիվ ներգրավումը կարևոր երաշխիք է՝ ներհամայնքային առանձին խմբերի հետ շահերի բախումից խուսափելու և աշխատանքների արդյունավետ ընթացքի ապահովման համար:

4. ՀՀ “Անտառային օրենսգիրք”- հանրամատչելի տեղեկատու

Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Հ/հ	Հասկացություններ	Մեկնաբանություններ
1.	Անտառային արդյունք	Մթերված անտառային պաշար
2.	Անտառային պաշարներ	անտառային ռեսուրսների օգտագործման ենթակա թույլատրելի մասը /ըստ ծավալի, քանակի, որակի, ձևի և տարածքային տեղադիրքի/
3.	Անտառների պետական հաշվառում	անտառային տնտեսության վարման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների գրանցում՝ հինգ տարին մեկ անգամ
4.	Անտառային տնտեսություն	արտադրական միավոր, որի գործունեության նպատակը անտառների կայուն կառավարումն է
5.	Անտառտնտեսության վարում	անտառշինական նախագծերով նախատեսված համալիր միջոցառումների իրականացում
6.	Անտառային տնտեսություն վարող անձ	անտառային տնտեսություն վարող իրավաբանական անձինք և քաղաքացիներ
7.	Անտառշինություն	անտառների կայուն կառավարման պլանավորմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում 10 տարին մեկ անգամ
8.	Անտառշինական նախագիծ (անտառկառավարման ծրագիր)	անտառշինության արդյունքում մշակված և անտառային տնտեսության վարման նպատակով հաստատված տեխնիկական փաստաթուղթ

9.	Անտառահատման տոմս	բնափայտի և երկրորդական անտառանյութի մթերման ու անտառից դուրսբերման իրավունքը հաստատող փաստաթուղթ
10.	Անտառային տոմս	կողմնակի անտառօգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթ
11.	Անտառօգտագործող	ֆիզիկական և իրավաբանական անձ, որն օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք է ձեռք բերել օգտվելու անտառի և անտառային հողերի օգտակար հատկություններից
12.	Բնափայտի մթերում	արմատից հատված, ինչպես նաև քամատապալ, ձյունակոտոր ծառերի անտառից դուրսբերումը:
13.	Երկրորդական անտառանյութ	մթերված կոճղ, կեղև, չորացած ճյուղ, շիվ, խեժ
14.	Թափուկ	անտառային հողի վրա ընկած մահացած ծառերի մասեր կամ բներ
15.	Ծառուտ	հիմնական արտաքին նշաններով միանման ծառերի ամբողջականություն
16.	Կենսաբանական բազմազանություն	ցամաքային, օդային և ջրային կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է ներտեսակային, միջտեսակային և էկոհամակարգերի բազմազանություն
17.	Հաշվարկային հատատեղ	անտառշինական նախագծով սահմանված բնափայտի մթերման տարեկան չափաքանակ
18.	Հատման տարիք	ծառերի հասունության գիտականորեն հիմնավորված ցուցանիշ

19.	Անտառվերականգնման հատումներ	հասուն և գերհասուն անտառներում բնական միջավայրի բարելավման և անտառվերականգնման նպատակով իրականացվող հատումներ
20.	Այլ հատումներ	անտառային տարածքների մաքրման, անտառային ճանապարհների կառուցման, անտառային տնտեսության վարման հետ չկապված՝ օրենքով սահմանված աշխատանքների կատարման նպատակով ծառերի հատումներ
21.	Խնամքի (միջանկյալ) հատումներ	ծառուտում գլխավոր անտառատեսակ կազմող ծառատեսակի աճ խոչընդոտող դանդաղաճ ծառերի պարբերաբար հեռացում
22.	Սանիտարական հատումներ	անտառների սանիտարական վիճակի բարելավման նպատակով վնասատուների և հիվանդությունների ազդեցության հետևանքով կենսունակությունը կորցրած կամ ցցաչոր և չորացած ծառերի հատումներ
23.	Ոչ անտառածածկ տարածք	անտառային հողերի անտառազուրկ տարածքներ
24.	Ոչ բնափայտային անտառանյութի մթերում	պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի և դեղաբույսերի, տեխնիկական հումքի մթերում և անտառից դուրսբերում
25.	Անտառային արդյունք	մթերված անտառային պաշար
26.	Անտառային պաշարներ	անտառային ռեսուրսների օգտագործման ենթակա թույլատրելի մասը /ըստ ծավալի,

		քանակի, որակի, ձևի և տարածքային տեղադիրքի/

Ի՞նչ է անտառը

- Անտառային կամ անտառապատման նպատակով հատկացված հողերում ծառաթփային բուսականության գերակշռությամբ կենսաբանական բազմազանության ու բնական միջավայրի բաղադրիչների փոխադարձաբար կապված և միմյանց վրա փոխազդող ամբողջություն, որի նվազագույն մակերեսը կազմում է 0,1հա, նվազագույն լայնությունը՝ 10,0մ, և որտեղ ծառերի սաղարթը ծածկում է տվյալ տարածքի առնվազն 30 %-ը, ինչպես նաև նախկինում անտառածածկ անտառային հողերի ոչ անտառածածկ տարածքները:

Ո՞ր տարածքներն են կոչվում անտառային հողեր

- Անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողերը:

Ինչպիսի՞ դասակարգման են ենթարկվում անտառները ըստ նշանակության

1. Պաշտպանական՝

ա/ ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների անտառները

բ/ բարձր թեքության (300-ից ավելի) վրա գտնվող անտառները

գ/ անտառների վերին և ստորին սահմանների 200 մետր լայնությամբ տարածքը

դ/կիսաանապատային, տափաստանային, անտառատափաս-տանային գոտիներում աճող անտառները

ե/բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրո-պարկերի շրջակա անտառները:

Այս անտառներում արգելվում է անտառվերականգնման հատումների իրականացումը:

2. Հատուկ՝

ա/ բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված անտառները,

բ/ ռեկրեացիոն և առողջարարական անտառները,

գ/ սահմանային, ռազմական նշանակության անտառները,

դ/պատմական և գիտական արժեք ներկայացնող անտառները,

ե/ սանիտարական գոտիները պահպանող անտառները:

Այս անտառներում սահմանափակվում կամ արգելվում են անտառօգտագործման այն ձևերը, որոնք չեն համապատասխանում դրանց պահպանության ռեժիմին:

3. Արտադրական՝

ա/ բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները:

Այս անտառներում բնափայտի մթերումն իրականացվում է անտառաշինական նախագծերի հիման վրա:

Ի՞նչ է անտառաշինությունը:

- Անտառաշինությունը անտառների կայուն կառավարման հիմքն է և ընդգրկում է՝

ա/ անտառային տնտեսության սահմանների որոշումը, անտառների քարտեզագրումը, անտառային հողերի գույքագրումը,

բ/ անտառվերականգնման, խնամքի սանիտարական և այլ հատումների կարգի և եղանակների սահմանումը,

գ/ անտառներն ըստ նշանակության դասակարգելու հիմնավորումը,

դ/ հաշվարկային հատատեղերի ծավալների հաշվարկումը,

ե/ անտառտնտեսական աշխատանքների ծավալների որոշումը,

զ/ կենսաբանական բազմազանության նկարագիրը:

Անտառաշինությունն իրավական ուժ է ստանում միայն անտառաշինական նախագծերի սահմանված կարգով հաստատվելուց հետո:

Ու՞մ կողմից է իրականացվում անտառների պահպանությունն ու պաշտպանությունը:

Անտառի սեփականատերերի, անտառային տնտեսություն վարող անձանց և անտառօգտագործողների:

Ի՞նչ են սանիտարական հատումները:

Անտառներում կիրառվում է սանիտարական հատումների երկու տեսակ՝

ա/ համատարած՝ իրականացվում է չորացած, հրդեհների, վնասատուների ու հիվանդությունների հետևանքով կենսունակությունը կորցրած տնկարկներում ու ծառուտներում: Այս դեպքում պարտադիր իրականացվում են անտառվերականգնման միջոցառումներ:

բ/ ընտրովի՝ հատվում են ցցաչոր, չորացած, կենսունակությունը կորցրած առանձին ծառեր:

Անտառօգտագործման ի՞նչ տեսակներ են նախատեսված գործող օրենսդրությամբ:

- բնափայտի և երկրորդական անտառանյութի մթերում,
- կողմնակի անտառօգտագործում,
- կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման, գիտահետազոտական, մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում:

Անտառօգտագործումն իրականացվում է անտառօգտագործման պայմանագրի և անտառահատման տոմսի կամ անտառային տոմսի հիման վրա:

Անտառահատման և անտառային տոմսերն անտառօգտագործողին տալիս են անտառային պաշարների կամ անտառների կամ անտառային հողերի օգտագործման իրավունք պետական և համայնքային անտառներում: Անտառահատման տոմսը

ներառում է մթերվող բնափայտի և երկրորդական անտառանյութի քանակական և որակական բնութագրերը, դրանց արժեքը, աշխատանքների կատարման ժամկետները, անտառավերականգնման և հատատեղերի մաքրման աշխատանքների պայմանները: Անտառային տոմսը ներառում է կողմնակի անտառօգտագործման տեսակը, տարածքը, ծավալները, ժամկետը, արժեքը և պայմանները: Անտառահատման կամ անտառային տոմսերը տալիս է անտառային տնտեսություն վարող կազմակերպությունը: Պետական անտառների անտառօգտագործման, անտառա-հատման կամ անտառային տոմսերը հատուկ հաշվառման ենթակա փաստաթղթեր են, որոնց ձևերը և տրամադրման կարգը հաստատում է պետական կառավարման լիազորված մարմինը:

Ի՞նչ նախապայմաններ են գործում կողմնակի անտառօգտագործման թույլտվություն ստանալու համար:

Անտառօգտագործման պայմանագրի և անտառային տոմսի հիման վրա անտառային հողերում կարող են իրականացվել՝

- պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի և դեղաբույսերի, տեխնիկական հումքի մթերում,
- մեղվանոցների, փեթակների տեղադրում, խոտհունձ և արածում,

Վարձակալության պայմանագրի հիման վրա՝

- գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման և հատապտղային, ընկույզների և դեղաբույսերի տնկադաշտերի ստեղծում

Կողմնակի անտառօգտագործման հատկացված տարածքներում արգելվում է՝

- ծառերի հատումը, ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բույսերի հավաքը:

Քաղաքացու ո՞ր արարքները կարող են բնութագրվել որպես անտառային օրենսդրության խախտման դեպքեր, և ինչպիսի պատասխանատվություն է սահմանված դրանց համար:

- անտառների սեփականության իրավունքի խախտելը, ծառերի ու թփերի հատելը և արմատախիլ անելը,
- հրկիզման կամ կրակի հետ անփույթ վարվելու հետևանքով անտառը փչացնելը կամ ոչնչացնելը, հակահրդեհային անվտանգության կանոնների պահանջների խախտելը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի խախտելը,
- անտառները քիմիական և ռադիոակտիվ նյութերով, արտադրական կեղտաջրերով, արդյունաբերական արտանետումներով, կենցաղային մնացուկներով և արտադրական թափոններով աղտոտելը,
- անտառները ոչնչացնելը, անտառին վնաս հասցնելը, անտառավերականգնման կարգը և ժամկետները խախտելը,
- անտառային հողերը առանց թույլատրության օգտագործելը, անտառային հողերում ինքնակամ խոտհունձը և արածեցումը,
- անտառային հողերի բերրի շերտը վնասելը կամ ոչնչացնելը, սանիտարական կանոնները, անտառօգտագործման, անտառավերականգնման և անտառապատման կարգը խախտելը,
- ոռոգման համակարգը, ճահճակալած տարածքները, դրենաժային չորացման առուների համակարգը, ինչպես նաև ճանապարհները վնասելը կամ ոչնչացնելը,
- արգելված տարածքներում ինքնակամ վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղներ հավաքելը, ինչպես նաև դրանք հավաքելու ժամկետները և եղանակները խախտելը,
- կենդանական աշխարհի օբյեկտներին վնաս հասցնելը,
- սահմանափակող անտառաշինական և այլ նշանները ոչնչացնելը կամ վնասելը,
- ջրերն աղտոտելու հետևանքով անտառային տնտեսությանն էական վնաս հասցնելը,
- քամատապալ, ձյունակոտոր, արմատից հատված ծառերը յուրացնելը:

Ի՞նչ է նշանակում անտառների և անտառային հողերի նկատմամբ սեփականության իրավունքը:

1. Անտառները և անտառային հողերը լինում են պետական, համայնքային և մասնավոր:
2. Պետական անտառները և անտառային հողերը ենթակա չեն օտարման համայնքներին, իրավաբանական անձանց և քաղաքացիներին:
3. Համայնքների, իրավաբանական անձանց և քաղաքացիների սեփական հողերի վրա դրանց սեփականատերերի կողմից հիմնված անտառները համարվում են նրանց սեփականությունը:

Ի՞նչ է ներառում անտառների հավատարմագրային կառավարման պայմանագիրը

1. Անտառների հավատարմագրային կառավարման պայմանագրով սեփականատերը կարող է մինչև 10 տարի ժամկետով հավատարմագրային կառավարչին անտառը հանձնել հավատարմագրային կառավարման:
2. Հավատարմագրային կառավարիչն իրավունք ունի իրականացնելու միայն հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված անտառօգտագործման տեսակները:
3. Պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է մրցույթի արդյունքում, որի անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագրով անտառները համայնքային կազմակերպություններին են հանձնվում առանց մրցույթի:

5. ՀՀ Կառավարության

2006 թվականի մայիսի 4 -ի "Պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատելու մասին" N 583-Ն որոշումը

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 54-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը:
2. Համայնքային կազմակերպությունների հետ հավատարմագրային կառավարման պայմանագրեր կնքելու լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

6."Պետական անտառները համայնքային կազմակեր-պություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը". հանրամատչելի տեղեկատու

Անտառային ո՞ր հողերն են տրվում համայնքային կառավարման առանց մրցույթի:

Համայնքային ենթակայության կազմակերպություններին առանց մրցույթի տրվում են հավատարմագրային կառավարման և անտառային տնտեսության վարման, նախկինում գյուղացիական կոլեկտիվ ու խորհրդային տնտեսություններին պատկանող և համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական անտառները և պետությանը սեփականության իրավունքով պատկանող անտառային հողերը :

Համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող անտառները համայնքը ի՞նչ ընթացակարգով կարող է վերցնել կառավարման

Համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող անտառների հավատարմագրային կառավարման համար կիրառվում է ընդհանուր մրցութային ընթացակարգ:

Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ անտառները համայնքային կառավարման վերցնելու համար:

Համայնքային անտառկառավարման (հավատարմագրային կառավարման) կազմակերպման համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- Համայնքի կողմից համայնքային անտառկառավարում ստանձնող կազմակերպության ստեղծում:
- Համայնքային ենթակայության կազմակերպության կողմից պետական անտառների՝ առանց մրցույթի հավատարմագրային կառավարումն ստանձնելու նպատակով լիազորված պետական մարմնի կողմից հաստատված ձևի հայտի ներկայացում լիազորված պետական մարմնին :
- Պետական անտառները համայնքային կազմակերպություններին (հավատարմագրային կառավարչին) առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու մասին համապատասխան գրավոր պայմանագրի կնքում:
- Անտառկառավարման պլանի համաձայն՝ անտառկառավարման իրականացում:

Որո՞նք են պետական անտառների հավատարմագրային կառավարման նպատակներն ու խնդիրները:

Պետական անտառների հավատարմագրային կառավարման նպատակներն ու խնդիրներն են՝

ա) անտառապատման, անտառավերականգնման միջոցառումների իրականացումը և անտառների օգտակար հատկությունների զարգացման ու կայուն անտառօգտագործման ապահովումը,

բ) անտառների պահպանության ապահովումը,

գ) անտառաշինական նախագծերի (անտառակառավարման ծրագրերի) հիման վրա կայուն անտառակառավարման ապահովումը,
դ) կողմնակի անտառօգտագործման զարգացման ապահովումը,
ե) դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերա-կանգնումն ու զարգացումը:

7. “Պետական անտառների հավատարմագրային կառավարման հայտի ընդունման և մերժման պայմանները”. հանրամատչելի տեղեկատու

Համայնքային ենթակայության կազմակերպությունը պետական անտառների՝ առանց մրցույթի հավատարմագրային կառավարումն ստանձնելու նպատակով լիազորված պետական մարմին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացնում պետական անտառների հավատարմագրային կառավարման հայտ:

Հայտին կից ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի կազմակերպությունը լիազորված մարմնին:

Հայտին կից կազմակերպությունը պետք է ներկայացնի՝

ա) տեղական ինքնակառավարման մարմնի գրավոր համաձայնությունը համայնքային կազմակերպության կողմից պետական անտառների հավատարմագրային կառավարման հայտ ներկայացնելու մասին՝ նշելով հայցվող տարածքի չափերը,
բ) համայնքային ենթակայության կազմակերպության կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները:

Ի՞նչ ժամկետներ են սահմանված պետական անտառներն առանց մրցույթի կառավարման հանձնելու մասին որոշումը լիազորված պետական մարմնի կողմից ընդունվելու համար:

Պետական անտառներն առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու մասին որոշումը լիազորված պետական

մարմնի կողմից ընդունվում է հայտն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

Լիազորված պետական մարմինը փաստաթղթերում հայտնաբերված թերությունների մասին ի՞նչ ժամկետներում է տեղեկացնելու հայտատուին, և ի՞նչ ժամկետներ են սահմանված հայտատուի կողմից դրանք վերացվելու համար:

Լիազորված պետական մարմինը ներկայացված փաստաթղթերում հայտնաբերված թերությունների մասին հայտատուին պետք է տեղեկացնի հայտն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, որոնք հայտատուն կարող է վերացնել դրա մասին տեղեկացվելուց հետո՝ 20-օրյա ժամկետում: Այդ ընթացքում կասեցվում է որոշում ընդունելու համար սահմանված մեկամսյա ժամկետը:

Ե՞րբ է կնքվում պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագիրը:

Պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է լիազորված մարմնի կողմից անտառները համայնքային կառավարման տալու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Անտառների հանձնման - ընդունման աշխատանքների համար ի՞նչ ժամկետներ են սահմանված:

Անտառների հանձնման - ընդունման աշխատանքներն սկսվում են պայմանագիրն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ նոտարական կարգով վավերացնելուց և անշարժ գույքի պետական կադաստրում գրանցելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Ո՞ր դեպքերում է լիազորված մարմինը մերժում հայտը և ի՞նչ ժամկետում է այդ մասին տեղեկացնում հայտատուին:

Լիազորված պետական մարմինը հայտը մերժում է անտառաշինական նախագծի բացակայության, անտառները կառավարման վերցնելու հայտը ներկայացնելու համար սահմանված եռամսյա ժամկետը բաց թողնելու, տեղեկացվելուց հետո սահմանված 20-օրյա ժամկետում փաստաթղթերում հայտնաբերված թերությունները չվերացնելու դեպքերում: Անտառները համայնքին առանց մրցույթի կառավարման տալը մերժելու մասին որոշման ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում լիազորված մարմինը դրա մասին տեղեկացնում է հայտատուին:

8. "Պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագրի պայմանները". հանրամատչելի տեղեկատու

Պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ՝ գրավոր, վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է գրանցման անշարժ գույքի պետական կադաստրում:

Որո՞նք են պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագրում նշվող պարտադիր պայմանները:

Պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագրում պարտադիր նշվում են՝
ա) պետական անտառների հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության ժամկետը,
բ) հավատարմագրային կառավարման ընթացքում ստացված շահույթի բաշխման վերաբերյալ դրույթները,
գ) անտառօգտագործման տեսակները, որոնց իրականացման իրավունքը կարող է փոխանցվել երրորդ անձանց,
դ) հավատարմագրային կառավարման հանձնված անտառների պահպանության և վերահսկողության վերաբերյալ դրույթները,
ե) հավատարմագրային կառավարման հանձնվող անտառների գույքի կազմը (տեսակը, քանակը, փաստացի վիճակը),

զ) հավատարմագրային կառավարչի անվանումը, գտնվելու վայրը,
է) հավատարմագրային կառավարչի կողմից համայնքի ղեկավարին հավատարմագրային կառավարման մասին հաշվետվություններ ներկայացվելու կարգը և ժամկետները,
ը) կողմերի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը,
թ) հավատարմագրային կառավարումն իրականացնող կազմակերպության կողմից լիազորված պետական մարմին հաշվետվություններ ներկայացվելու կարգը և ժամկետները,
ժ) հավատարմագրային կառավարչի վարձատրության չափի ու պայմանների վերաբերյալ դրույթները:

Պայմանագրով կարող են նաև նախատեսվել կառավարման օբյեկտների նկատմամբ կառավարչի, հիմնադրի և շահառուի իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ այլ դրույթներ:

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կառավարման գործունեության հետ կապված ռիսկերը բաշխվում կամ ամբողջությամբ ընդունվում են կառավարչի կողմից: Ռիսկերի բաշխման հարցի վերաբերյալ կնքվում է առանձին համաձայնագիր:
2. Պայմանագրի համաձայն՝ կառավարվող անտառներում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների հաշվապահական հաշվառումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գրքույկը հրատարակվել է Կովկասի տարածաշրջանային բնապահպանական հայաստանյան գրասենյակի կողմից (ԿՏԲԿ ՀՄ) “ԱջակցությունԿովկասի լեռնային շրջանների համայնքային անտառների քաղաքականությանը և պրակտիկային” տարածաշրջանային ծրագրի շրջանակում : Երևան 2011

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը անկախ, ոչ քաղաքական, ոչ առևտրային, բնապահպանական կազմակերպություն է: Կազմակերպությունը հիմնադրվել է աջակցելու տարածաշրջանային և ազգային բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը Հարավայի կովկասի երկրներում, հասարակական կազմակերպություններին տեղեկատվական, խորհրդատվական և ֆինանսական աջակցության տրամադրման, ինչպես նաև ՀԿ-ների, կառավարական կառույցների և զանգվածային լրատվամիջոցների միջև համագործակցության խթանման միջոցով:

Մեր հասցեն՝
Հայաստանի Հանրապետություն
0025 Երևան, Չարենցի պող.1
Հեռ/Ֆաքս՝ +374 10 57 47 43; 57 51 48
Վեբ կայք՝ www.rec-caucasus.am

REC CAUCASUS